ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Արմավիրի մարզ, Մեծամոր քաղաք, Վարչական կենտրոն, 2.4, Հեռ. 060900303 ,
info.metsamor@mta.gov.am

N **01888**
22 ապրիլ 2026 թ.

Ա/Ձ ԱՇՈՏ ԱՆՏՈՆՅԱՆ
ՏՆՕՐԵՆ ԱՇՈՏ ԱՆՏՈՆՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Անտոնյան,

Տեղեկացնում ենք, որ Մեծամորի համայնքապետարանի և Ա/Ձ «Աշոտ Անտոնյան»-ի միջև 2026 թվականի ապրիլի 01-ին կնքված թիվ ՀՀԱՄՄՀ-ԳՀԾՁԲ-26/31 ծածկագրով ծառայության մատուցման պետական գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակներում 2026 թվականի ապրիլի 20-ին ստացվել է Ձեր կողմից Մեծամորի համայնքապետարանի ղեկավարին ուղղված գրությունը, որով հայտնել եք, որ ֆինանսական խնդիրների պատճառով ցանկանում եք լուծել Ձեր և Մեծամորի համայնքապետարանի միջև կնքված պայմանագիրը: Նաև խնդրել եք նախաձեռնել համապատասխան գործընթացը՝ ապահովելով պայմանագրի լուծումը սահմանված կարգով և պայմաններով:

Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների, և 1.2 կետի համաձայն՝ Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

Պայմանագրի 2.1.3 կետի համաձայն՝ Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

Պայմանագրի 5.1.-րդ կետի համաձայն՝ Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

Ղեկավարվելով Պայմանագրի վերը նշված կետերով և հաշվիառնելով այն հանգամանքը, որ Ա/Ձ «Աշոտ Անտոնյան»-ն խախտել է պայմանագրային պարտավորությունները և չի մատուցել նշված ծառայությունը, հայտնումենք, որ 2026 թվականի ապրիլի 22-ից Մեծամորի համայնքապետարանի կողմից Պայմանագիրը միակողմանի մասնակիլուծվել է:

Պայմանագիր կնքելիս Ա/Ձ «Աշոտ Անտոնյան»-ի կողմից ներկայացվել է որակավորման և պայմանագրի կատարման ապահովումներ՝ միակողմանի հաստատված տուժանքի համաձայնագրերի տեսքով:

Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Պայմանագիրը միակողմանի մասնակի լուծվել է, ուստի պետք է ապահովվի որակավորման ապահովման՝ 735,000.00 (յոթ հարյուր երեսունհինգ հազար) ՀՀ դրամի և պայմանագրի կատարման ապահովման՝ 490,000.00 (չորս հարյուր իննսուն հազար) ՀՀ դրամի փոխանցումը Մեծամորի համայնքապետարանի 900335239373 հաշվեհամարին, որի վերաբերյալ տեղեկացվել է նաև Ձեր կազմակերպությանը սպասարկող «ԿՈՆՎԵՐՍԲԱՆԿ» ՓԲԸ բանկը, ուստի խնդրում ենք ապահովել վերոնշյալ գումարների փոխանցման իրականացումը:

Միաժամանակ հայտնում ենք, որ վերոնշյալ գանձումների անհնարին լինելու դեպքում Մեծամորի համայնքապետարանը այդ հանգամանքի վերաբերյալ տեղեկատվությունը՝ համապատասխան պատճառաբանված որոշմամբ,տրամադրելու է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջները կիրառելու նպատակով:

Հարգանքով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

Կատ. Ֆինանսատնտեսագիտական և գնումների բաժնի պետ՝ Ն. Հակոբյան +37498393676